ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 5** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորային համատեղ աշխատանքներ կազմակերպելու կարգի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հոդվածի 1-ին կետի և 95-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան, ինչպես նաև գիտական ներուժի արդյունավետ օգտագործման, ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում գիտական և նորարարական գործունեության մեջ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համագործակցության զարգացման և խորացման նպատակներով՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համակարգմամբ մշակել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում գիտահետազոտական և

փորձակոնստրուկտորային համատեղ աշխատանքներ կազմակերպելու կարգ և այն ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**